ՍՓՅՈՒՌՔԻ ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՍԱՆԵՐԻ ՀԱՎԱՔ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

«Ով իմ անունով մի այսպիսի մանուկ ընդունելու լինի, ի՛նձ կընդունի: Եվ ով ինձ հավատացող այս փոքրիկներից մեկին գայթակղեցնի, լավ կլինի, որ իր պարանոցից երկանաքար կախի և ընկղմվի ծովի խորքը»:

(ՄԱՏԹ. ԺԸ 5-6)

Հիսուս՝ մարդկային հոգին ճանաչող մեծ Վարդապետը, մանկան մեջ տեսավ սրբությունը, մանկան անմեղ խորհուրդը և գնահատեց ու սիրեց նրան, նաև պատվիրեց գուրգուրանքով շրջապատել մանուկներին, նվիրվել նրանց:

Հետագա դարերում հավատավոր մարդիկ հետևեցին Տիրոջ պատգամին, Նրա իսկ օրինակով ի մի բերեցին մանուկներին՝ տալով նրանց հոգևոր, կրոնա-բարոյական դաստիարակություն: Այսպես գրվեց Կիրակնօրյա դպրոցների պատմությունը, որի օրինակելի հետևորդները այն ուսուցիչ-ուսուցչուհիներն են, ովքեր իրենց նվիրումն ու սերը չեն խնայում՝ մանուկ հոգիներում սերմանելու Ավետարանի սերմերը, հաստատելու Աստվածորդու պատգամ-հորդորները: Իսկ նպատակին հասնելու ուղիները բազմազան են: Նպատակամետ ճիշտ այդպիսի մի ուղի էր նաև այս ամառ, օգոստոսի 29-ից սեպտեմբերի 18-ը, Հայաստան աշխարհի գեղատեսիլ անկյուններից մեկում՝ Ծաղկաձորում գումարված Սփյուռքի կիրակնօրյա դպրոցների աշակերտաց անդրանիկ հավաքը, որին մասնակցում էին թվով 23 սաներ Սիրիայից և Լիբանանից: 12 մանկավարժներ էին ուղեկցում երեխաներին, որոնց թիվը համալրվեց նաև Մայր Հայրենիքի Կիրակնօրյա դպրոցների ուսուցչական կազմերից ընտրված անդամներով:

Առանձնակի սիրով պետք է նշել Կիրակնօրյաների խորհրդի անդամներ արժանապատիվ Տ. Գուրգեն քհն. Հովհաննիսյանին, Աբել սրկ. Աբելյանին, պարոն Աբրահամ Թաշճյանին, ՀԵԿԴՕՄ-ի ներկայացուցիչ տիկին Էլիզ Մահլեպճյանին և այն անձանց, ովքեր իրենց տքնաջան աշխատանքով կարողացան հայթայթել համապատասխան գումարը՝ սաների անդրանիկ համաժողովը կազմակերպելու և հենց Հայաստան աշխարհում անցկացնելու համար, քանի որ, իրենց իսկ բառերով ասած, որքան էլ սաներին պատմես Հայրենիքի ու նրա հերոս նահատակների, բարձրաբերձ լեռների ու խորունկ ձորերի, զգլխիչ մեղեդիների ու քաջության ոգի արթնացնող երգերի մասին, միևնույն է, նրանք միայն իրենց տեսածով են ապրում, ոգևորվում և օրինակ առնում:

Եվ ինչպես միշտ, այս անգամ ևս թե՛ ուսուցիչների և թե՛ սաների կողքին էր Կիրակոսյան դպրոցների վարիչ-տնօրեն գերաշնորհ Տ. Սեպուհ եպս. Սարգիսյանը, ով իր հոգևոր ծառայության ողջ տարիները նվիրել է այս շնորհաշատ և աստվածահաճո գործին:

Սրբազան Հայրը յուրահատուկ սիրով հանձն առավ մանուկների այս պատասխանատու միջոցառման կազմակերպման ու անցկացման դժվարին աշխատանքները:

Արտահայտելով իր սերը հանդեպ մանուկները, ինչպես նաև հանդեպ Կիրակոսյան դպրոցների գործունեությունն ընդհանրապես, Սրբազան Հայրն ասաց, որ ինքը երբևէ չի մտածել իրեն վստահված գործի կարևոր և անկարևոր կողմերի մասին, ոչ էլ հոգնել է այդ դժվարին առաքելության ճանապարհին: Ամեն մի ուսումնական վերամուտ կամ տարեշրջանի փակում իր առանձնահատկությունն է ունեցել և հետաքրքիր հիշողություններ թողել կյանքում:

Չի ընկրկել դժվարություններից, փորձել է անկարելին դարձնել կարելի, որն էլ իր նկատմամբ ձևավորված սիրո ու հարգանքի հիմնական պատճառն է:

Անցնող քսան օրերի ընթացքում աշակերտական հավաքի մասնակիցներն ապրեցին հետաքրքիր շատ պահեր:

Հայոց հինավուրց երկրի գեղատեսիլ տարբեր վայրերում անկրկնելի բերկրանքով վերակերպավորեցին իրենց ուսուցիչ-ուսուցչուհիներից լսածը, դասաժամերին ուսանածը: Գառնիի հեթանոսական տաճարում մեկ անգամ ևս լսեցին հեթանոս նախնիների և չաստվածների մասին, Գեղարդում զարմանքը միախառնվեց գեղեցկության ապրումին, Խոր Վիրապում Թորգոմա տոհմի Լուսավորիչ նահապետից հոգու անմար կանթեղ խնդրեցին, Էջմիածնում ծնրադրեցին Իջման Սուրբ Սեղանի առջև և իրենց հավատի մոմը վառեցին, Օշականում Մեծ Սուրբից աղերսեցին մտքի պայծառություն, Հաղարծինն իր անկրկնելիությամբ հմայեց նրանց, Մատենադարանի ձեռագիր մատյաններում նրանք տեսան ոչ միայն հարազատ ժողովրդի անցյալը, այլև ներկան ու լուսաշող գալիքը:

Միծեռնակաբերդի բարձունքից սփյուռքահայ երեխաները զմայլվեցին Երևանի գեղեցկությամբ, Արարատի վեհությամբ, Անմեղ զոհերի հուշահամալիրում և Եռաբլուրում ներկա գտնվեցին հոգեհանգստյան արարողությանը, դիտեցին նաև Եղեռնի զոհերի թանգարանի ցուցադրանքը:

Կապուտաչյա Սևանում նրանք խայտացին ջրերի ծիծաղուն ալիքների հետ, իսկ Ս. Աստվածածնի վերափոխման տոնի օրը Հրազդանի եկեղեցում մատուցված Սուրբ և անմահ Պատարագի ժամանակ ստացան Սուրբ Հաղորդություն:

Երեխաների առօրյան հագեցած էր նաև ուսանելի դասաժամերով, շարականների ուսուցմամբ, գրական երեկոներով:

Վեջին օրը Ծաղկաձորում երեխաների համար առավել ուշագրավ էր

ու հետաքրքիր: Օրվա առաջին կեսը նշանավորվեց երեխաների ձեռքի աշխատանքների և նկարների ցուցահանդեսով, որի բացմանը ներկա էին մեծաթիվ հյուրեր: Ցուցադրանքում հավաքի մասնակիցների ապրումներն էին, Հայաստան աշխարհից ստացած իրենց տպավորությունները, մանկական անկեղծ ու մաքուր զգացումների արտահայտությունը:

Կտրելով ցուցահանդեսի մուտքը երիզող ժապավենը, Սեպուհ Սրբազանն առանձնակի կարևորեց կիրակնօրյա դպրոցի ուսուցչի դերը մանուկ սերնդի ձևավորման այնքան դժվարին գործընթացում՝ ի մասնավորի նշելով.

«Իրական ու վավերական ուսուցիչն նա է, որ գիտե իր կյանքը վերածել հարատև ուխտագնացության դեպի նպատակակետը, որովհետև Էականը այս աշխարհին մեջ ոչ թե ուսուցիչին ուր հասնիլն է, այլ ինչի ձգտիլն է: Ճշմարտության ձգտիլը ուսուցիչը արթուն կպահե, ավելին, զինք կմղե հարատևորեն որոնումի, փնտռտուքի՝ հանուն այդ նույն ճշմարտության:

Կասկած չկա, որ ուսուցչությունը վեհ ասպարեզ է, ավելի ճիշտը՝ նվիրական կոչում է, որպեսզի ուսուցիչը ինք կարենա իրողապես ինքզինք ըլլալ, մանավանդ քրիստոնյա ուսուցիչը, որ կոչված է նաև Ավետարանին ճշմարտությունները փոխանցելու իր նմաններուն, հարկ է, որ նախ ինք ապրի և ապա ունենա ներշնչյալ կյանք մը, այսինքն այնպիսի կյանք մը, որուն ակունքները արմատացած ըլլան Աստվածային ճշմարտությանց խորը, որպեսզի կարենա իրողապես ներշնչանք ըլլալ: Ի վերջո, ուսուցիչը որոնող, փնտռտուք ընող և քննող Էակ է, մեկ խոսքով իր կյանքը դեպի իր նպատակակետը, հարացույցը գնացք է և այդ գնացքի ընթացքին իր գերագույն ճիգը պիտի ընե լավագույնը իրագործելու համար, ի վերջո պետք չէ մոռանալ, որ ասիկա պիտի ըլլա Աստուծո նայվածքին ներքև: Երանի այն ուսուցչին, որ կապրի գիտակցությունը իր Աստուծո նայվածքին ներքև ըլլալու իրողության»:

Աշակերտական հավաքի վերջին օրը սահմանափակվեց երեկոյան խարույկահանդեսով: Մանկական ուրախ երգն ու պարը, բեմականացված հատվածները, ասմունքը մեծ բավականություն պարգևեցին բոլոր ներկաներին:

Ավարտվեց անդրանիկ հավաքը, երեխաները հրաժեշտ տվեցին Հայրենիքին՝ իրենց հետ տանելով հետաքրքիր առօրյայի, գեղատեսիլ վայրերի ու հայրենի բնության հարուստ տպավորությունները:

ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ